N.K. BAGHDASARYAN

EXPORTING DEMOCRACY AND ITS CONSEQUENCES

One of the modern and important problems of exporting democracy faced by every country nowadays is referred to. Special attention is paid to the post Cold-War period as the most active period. Reference is made to the characteristics of exporting democracy to different countries, depending on the development level and national identity of the given country.

Keywords: democracy, export, country, national identity.

ՀՏԴ 321.01.329

Ա.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՅԴ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Անդրադարձ է կատարվել ՀՅԴ-ի՝ հայրենիք վերադառնալու անհրաժեշտությանը, պետականաշինության գործում և արցախյան ազատամարտում նրա ունեցած դերակատարությանը: 1990թ օգոստոսի 8-ին. պաշտոնապես Հայրենիք վերադարձավ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որն ակտիվ մասնակցություն ունեցավ Ղարաբաղյան շարժմանը՝ հիմնահարցի զարգացման բոլոր փուլերում: Միաժամանակ ձգտելով իր հնարավորությունները դրսևորել նաև Հայաստանի Հանրապետությունում անկախ պետականության հաստատման ու ամրապնդման գործընթացում՝ՀՅԴ-ն մի շարք սկզբունքային հարցերում ընդդիմադիր դիրք ընդունեց իշխանությունների նկատմամբ: Իշխանությունների հետ ՀՅԴ տարաձայնությունները ի վերջո հանգեցրին կուսակցության դեմ սկսված հալածանքներին: 1998 թ. փետրվարի 9-ի որոշմամբ պաշտոնապես վերականգնվեց ՀՅԴ-ի գործունեությունը ՀՀ-ում:

Առանցքային բառեր. Հայ Յեղափոխական Դաշնակցություն, հայրենիք, ընդդիմություն, Արցախյան շարժում, կուսակցություն:

1988 թ. օգոստոսին գումարված ՀՅԴ 24-րդ Ընդհանուր ժողովը մշակեց մի ուղեգիծ, որը ստացավ Խ. Մալումյանի «Դէպի Երկիր» կարգախոսը |1|: 1989-ին սկսվեցին ՀՅԴ աշխատանքները հայրենիքում, իսկ 1990թ. օգոստոսի 8-ին. Հայրենիքում իր ներկայության մասին պաշտոնապես հայտարարեց Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: ՀՅԴ-ն իր էությամբ, աշխարհայացքով և ավանդույթներով ազգային, սոցիալիստական |2|, ժողովրդավարական և հեղափոխական կուսակցություն է, որը պայքարում է հայության տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային շահերի պաշտպանության համար (ուշագրավ է, որ ՀՅԴ-ն հեղափոխություն բառը մեկնաբանում է հետևյալ կերպ. ի տարբերություն մարքս-լենինյան օտար և ապազգային գաղափարախոսությունից ծնված հեղափոխության, որ պարտադրվեց աշխարհի շատ ժողովուրդների, Դաշնակցության հենց անվան մեջ «հեղափոխական բառից առաջ դրված է «հայ» բառը, որ նշանակում է, թե հայկական հեղափո-

խություն՝ հայ իրականությունից ծնված, հայ ժողովրդի խնդիրները լուծելու համար կյանքի կոչված) |3|:

ՀՅԴ-ն պայքարում էր Հայ Դատի լուծման՝ «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան», կամ «Հայահավաք և հողահավաք», այսինքն՝ Միացյալ Հայաստանի սահմանները պետք է ներառեն ՀՀ-ը, Արցախը, Ջավախքը, Նախիջևանը և Արևմտյան Հայաստանը (ԱՄՆ պրեզիդենտ Վ. Վիլսոնը 1920թ. նոյեմբերի 22-ին սահմանագծեց հայ-թուրքական սահմանը):

1923թ-ից Վաշինգտոնում գործում էր ՀՅԴ հասարակական հարաբերությունների մասնաճյուղը հանդիսացող «Ամերիկայի հայ ազգային կոմիտե» կազմակերպությունը, որի ծրագրային հիմնահարցերը 1990-ականների սկզբներին հանդիսանում էին Հայոց ցեղասպանության ճանաչումը, երկրաշարժի առթիվ օգնության ձեռքբերումը և Ղարաբաղյան ինքնորոշման պաշտպանությունը: ԱՄՆ-ում հայկական լոբբինգային գործունեության արմատները սկիզբ են առնում 1918 թվականից, երբ ՀՅԴ-ն կողմից հիմնադրվեց Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն (ՀԱԱԿ), որի նպատակն էր անկախ Հայաստանի ստեղծումը Նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից որոշված սահմաններում: Նշենք, որ ՀԱԱԿ-ը ներկայիս Ամերիկայի հայ ազգային կոմիտեի (ԱՀԱԿ) նախորդն էր:

1988թ. հոկտեմբերին ՀՅԴ-ն, Հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունների հետ համատեղ արված հայտարարությամբ միանգամայն արդարացի ճանաչեց Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորվելու Արցախի հայ բնակչության պահանջը |4|:

ՀՅԴ-ն մասնակցեց 1991թ. ՀՀ նախագահական ընտրություններին, և ՀՅԴ թեկնածուն սիրված դերասան Սոս Սարգսյանն էր: Սոս Սարգսյանի տեղակալը, այն ժամանակ երիտասարդ քաղաքական գործիչ Վահան Հովհաննիսյանն էր: 2008թ. ևս ՀՅԴ-նը ՀՀ նախագահական ընտրություններին մասնակցեց սեփական թեկնածուով՝ ի դեմս Վահան Հովհաննիսյանի: ՀՀ խորհրդարանական բոլոր ընտրություններին ՀՅԴ–ն, բացառությամբ 1995թ ԱԺ ընտրությունների, մասնակցել և ունեցել է իր տեղերը, այսինքն՝ խմբակցությունը օրենսդիր մարմինում: ՀՅԴ-ն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Արցախի ազատագրական պայքարին, նախ՝ թիկունքային աջակցության առումով, ապա՝ մասնակցեց բուն ռազմական գործողություններին իր սեփական ջոկատով, որում ընդգրկված էին նաև Սփյուռքից եկած հայորդիներ (Միեր Ջուլհակյան, Վիգեն Զաքարյան, Հարմիկ Հովսեփյան և ուրիշներ): 1992թ. ՀՅԴ-յան ջոկատի հիմքի վրա ստեղծվեց Շուշիի առանձնակի գումարտակը:

Միաժամանակ, ձգտելով իր հնարավորությունները դրսևորել նաև Հայաստանի Հանրապետությունում անկախ պետականության հաստատման ու ամրապնդման գործընթացում՝ ՀՅԴ-ն մի շարք սկզբունքային հարցերում ընդդիմադիր դիրք ընդունեց իշխանությունների նկատմամբ |5|: Իշխանությունների հետ ՀՅԴ տարա-

ձայնությունները ի վերջո հանգեցրին կուսակցության դեմ սկսված հալածանքներին, որի արտահայտություններից մեկն էլ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ 1992թ. հունիսի 29-ի ելույթն էր ՀՅԴ-ն դեմ, որով ՀՀ նախագահը կուսակցությանը մեղադրեց աղետի գոտու և Արցախի համար հանգանակված գումարների յուրացման, ահաբեկչության, Հայաստանի ժողովրդին պատերազմի մեջ ներքաշելու քաղաքականության, իշխանությունների հետ գործակցելու մերժման, իր շարքերից գործակցող անդամներին հեռացնելու, ՊԱԿ-ի գործակալ լինելու մեջ և այլն |6|: Հալածանքների եզրափակիչ քայլը եղավ 1995թ. խորհրդարանական ընտրությունների նախօրյակին, երկրի նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով, ապա ՀՀ Գերագույն դատարանի 1995թ. հունվարի 13-ի որոշմամբ ՀՅԴ և նրան ուղեկից կազմակերպությունների գործունեության կասեցումը Հայաստանում՝ հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին օրենքի խախտման մեղադրանքով|7|: Փակվեցին կուսակցության գրասենյակներն ու լրատվամիջոցները, բռնագրավվեցին ու թալանվեցին կուսակցական միջոցներն ու գույքը, ՀՅԴ մի շարք հայտնի գործիչներ ազատազրկվեցին:

ՀՅԴ Բյուրոն՝ ՀՅԴ-ն կենտրոնական կոմիտեների ներկայացուցիչների մասնակցությամբ, 1995 թ. հունվարի 5-6-ը ժողով գումարելով՝ քննեց Դաշնակցությունը ապօրինի հռչակելու և ՀՅԴ հայաստանյան գործունեությունը արգելելու ՀՀ նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագիրը և դրա հետևանքով հայ իրականության մեջ ստեղծված ազգային-քաղաքական ծանրակշիռ կացությունը և հաստատեց ՀՅԴ Բյուրոյի հունվարի 6-ի հայտարարությունը, որով դեկտեմբերի 28-ի հրամանագիրը համարեց ապօրինի ու հակաժողովրդավարական և պահանջեց ՀՀ նախագահից հետ կանչել այն՝ որպես երաշխիք ՀՀ իրավական ու ժողովրդավարական կարգերը հարգելու ու պաշտպանելու պարտավորության|8|: Այնուհետև, ՀՅԴ-ն ՀՀ իշխանություններից պահանջեց անմիջապես դադարեցնել Դաշնակցությանը վարկաբեկելու պետական քարոզչությունը, իսկ ՀՀ նախագահից՝ հարգել Հայաստանի անկախության հռչակագրով, շրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, հարգել մարդու իրավունքներն ու ժողովրդավարական ազատությունները, միաժամանակ երաշխավորել դաշնակցական ձերբակալված գործիչների ու ակտիվ անդամների անհապաղ և արդար դատաքննության արժանանալու իրավունքը և վերջ տալ նրանց դեմ կիրառվող վարկաբեկման ապօրինի քարոզչությանը: ՀՅ Դաշնակցությունը նաև վերահաստատեց բոլոր ուժերով հայրենի հողի վրա հայ ժողովրդին ծառայելու իր առաքելությունը շարունակելու վճռականությունը:

Հայաստանում ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ոտնահարման, ՀՀ նախագահի 1994թ. դեկտեմբերի 28-ի ՀՅ Դաշնակցության, Հայ օգնության միության, Համազգայինի, Հայ մարմնակրթական ընդհանուր միության,

ՀՅ Դաշնակցության Երիտասարդական միության և մամուլի գործունեության «խափանման» որոշման դեմ սփյուռքահայության շրջանում տեղի ունեցան ժողովրդական հավաքներ: ՀՅԴ գործունեության կասեցման մասին նախագահի հրամանագրի դեմ բողոքելու համար ՀՅԴ ԱՄՆ Կենտրոնական կոմիտեն 1995թ. հունվարի 8-ին Փասադենայում (ԱՄՆ) կազմակերպեց բողոքի համաժողովրդական հավաք, որին մասնակցեց շուրջ 4000 մարդ|9|: Նույն օրը ՀՅԴ Բյուրոն ընդունեց հայտարարություն, որով դատապարտվում էր ՀՀ նախագահի դեկտեմբերի հակաօրինական հրամանագիրը՝ որպես Հայաստանի ու արտերկրի հայությանը տարբերելու և, ընդհանրապես, հայությանը երկփեղկելու վարքագծի նոր արատհայտություն |10|: «Հայաստանի իշխանութիւններու հետ գործակցութեան այս առկախումները արգելք պիտի չըլլան, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը և իր գործակից ու համակիր զանգուածները շարունակեն Հայաստանի և Արցախի ժողովրդին հասցնել իրենց բարեսիրական ու մարդասիրական օժանդակութիւները և զօրավիգ կանգնիլ Արցախի ազատագրական արդար պայքարին»,- նշվում է ՀՅԴ Բյուրոյի հայտարարության մեջ |11|:

Իշխանությունների կողմից կուսակցության գործունեության հետագա արգելումը դարձավ անիմաստ: Լ. Տեր-Պետրոսյանի 1998թ. հրաժարականից հետո և Ռ. Քոչարյանի՝ ՀՀ Նախագահի պաշտոնակատար դառնալուց մի քանի օր անց, ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 1998 թ. փետրվարի 9-ի որոշմամբ պաշտոնապես վերականգնվեց ՀՅԴ-ն գործունեությունը ՀՀ-ում, կարճվեցին քրեական գործերը ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամների նկատմամբ, վերսկսվեց կուսակցության թերթերի հրատարակումը|12|: 1998թ. ձմռան-գարնան ամիսներին վերականգնվեցին Դաշնակցության բոլոր իրավունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Մինասյան Է.** Արցախյան ազատագրական շարժումը և «Դեպի Երկիր» կարգախոսը, Հայ Հեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր, «Հայ Դատ» հիմնադրամ, Երևան 2011, էջ 151: Նշենք նաև, որ Քրիստափոր Միքաելյանի «Հարատև կռիվ», «Հավելյալ արյուն» և Խաչատուր Մալումյանի«Դեպի Երկիր» կարգախոսները միշտ էլ խթան են հանդիսացել ՀՅԴ գործունեությունը ուղղելու դեպի հայաստանակենտրոնություն:
2. **Ղազարյան Ա.** Զավարյանը՝ սոցիալական արդարության ջատագով // «ՎԷՄ» համահայկական հանդես, Ե (ԺԱ) տարի, թիվ 4 (44), հոկտեմբեր-դեկտեմբեր, «Էդիթ Պրինտ» տպարան. - Երևան, 2013.- էջ 176:
3. **Հարցեր ՀՅ Դաշնակցությանը,** առանց տարեթիվ, էջ 1:
4. **Սփյուռքահայ կազմակերպություններ,** էջ 50: Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 678:
5. **Պետրոսյան Ք.** Հայրենիք- Սփյուռք հարաբերությունները 1988-2001,Ե., 2011, էջ 20:
6. **Նույն տեղում,** էջ 20:
7. **Հայ Սփյուռք հանրագիտարան,** էջ 679:

8. **Մանոյեան Կիրо,** 120-ամեայ Դաշնակցութեան մեծագոյն նուաճումներից մէկը Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան եւ կերտման մէջ իր ստանձնած առաջնորդող դերակատարութիւնն է, Ալիք, հաւելած նուիրած ՀՅԴ 120 ամեակին, փետրուար 2011, էջ 23:
9. **Աճեմեան Ա.** ՀՅԴ պատմութեան մէջ 1988-2007թթ Արցախի ազատագրական շարժման մասնակցութեան, Հայաստանի վերանկախացած պետութեան կայացման, հայրենի քաղաքական դաշտում գործունեութեան ծավալման ժամանակաշրջան, Ալիք, հաւելած նուիրած ՀՅԴ 120 ամեակին, փետրուար 2011, էջ 17:
10. **ՀՅԴ Բիւրо,** Յայտարարութիւն, Արմենիա, բացառիկ թիւ, յունուար 1995:
11. **Նոյն տեղում:**
12. **Мелконян Е.** Политические партии диаспоры и процессы демократизации в Армении - Диаспора, нефть и розы, Чем живут страны Южного Кавказа / Под редакцией И. Хаиндравы и А. Искандарян. - Ереван, 2005. - С. 112.

А.С. КАЗАРЯН

ВОЗВРАЩЕНИЕ АРФ НА РОДИНУ И ЕЕ УЧАСТИЕ В ПРОЦЕССЕ ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА

8 августа 1990 года Армянская революционная федерация АРФ (Дашнакцутюн) официально вернулась на родину и приняла активное участие в Карабахском движении на всех этапах развития проблемы. Одновременно с этим, стремясь продемонстрировать свои возможности в процессе создания и укрепления государственной независимости Республики Армения, АРФ выступила в роли оппозиции по отношению к властям. Разногласия партии с властями в конце концов привели к преследованиям против нее. Решением 9 февраля 1998 года была официально восстановлена деятельность партии “Дашнакцутюн” в Армении.

Ключевые слова: движение, партия, Армянская революционная федерация, родина, оппозиция, Арцахское движение, партия.

A.S. GHAZARYAN

THE RETURN OF ARF TO HOMLAND AND ITS PARTICIPATION IN THE STATE-BULDING PROCESS

On August 8, 1990, the Armenian Revolutionary Federation officially returned to its homeland, and has taken an active part in the Karabakh movement at all stages of the problem development. At the same time, striving to demonstrate its abilities in the process of establishing and strengthening the independent statehood of Republic of Armenia, ARF has taken an oppozite position to the republic authorities in a number of fundamental issues, the disagreements with the authorities finally led to the persecution launched against the party. On February 9, 1998, the ARF's activities in Armenia was officially rehabilitated.

Keywords: Armenian Revolutionary Federation, homeland, opposition, Artsakh movement, party.